

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՊԵՏԻԿԻ

ՀՈՎԱԵՓ ԿԱՐԱԼՅԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ

**ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական
արվեստ, դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

МИНАСЯН МАРИНЕ ПЕТИКОВНА

ЖИВОПИСЬ ОВСЕПА КАРАЛЯНА

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности**

**17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное
искусство, дизайн”**

ЕРЕВАН – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

արվեստագիտության դոկտոր
Չուգասյան Լևոն Բարկենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
Քերթմենջյան Դավիթ Գրիգորի

արվեստագիտության թեկնածու
Վարդանյան Սաթենիկ Վլադիմիրի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. մայիսի 21-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. ապրիլի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ասատրյան Ա. Գ.

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель -

доктор искусствоведения
Чукасян Левон Бабкенович

Официальные оппоненты -

доктор архитектуры, профессор
Кертменджян Давид Григорьевич
кандидат искусствоведения
Варданян Сатеник Владимировна

Ведущая организация — Ереванская государственная художественная академия

Защита диссертации состоится 21-го мая 2015г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.
Автореферат разослан 21-го апреля 2015г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А. Г.

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սույն ատենախոսական աշխատանքը նվիրված է խորհրդահայ կերպարվեստի ներկայացուցիչ, ԽՍՀՄ նկարիչների միության անդամ (1942), ՉՍՄՉ վաստակավոր նկարիչ (1967), թիֆլիսահայ հիանալի վարպետ Յովսեփ Արտեմի Կարալյանի (1897-1981) գեղանկարչությանը: Թեմայի այժմեականությունը պայմանավորված է 20-րդ դարի հայկական կերպարվեստի, մասնավորապես թիֆլիսահայ արվեստի պատմության բաց էջերը լրացնելու անհրաժեշտությամբ:

Առավել քան բազմաժանր է Հ. Կարալյանի ստեղծագործական գործունեությունը. արվեստագետն ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, 1953-ից՝ Երևանում: Զբաղվել է գեղանկարչությամբ, գծանկարչությամբ, գրքային ձևավորմամբ, բեմանկարչությամբ, որմնանկարչությամբ, պլակատների ձևավորմամբ, քանդակագործությամբ (սիրողական), փայտի փորագրություններով (զրավյուրի), անգամ էսքիզներ արել ֆիլմի համար: Նա երկար տարիներ զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ. դասավանդել է Թիֆլիսում (Հայարտան գեղարվեստական ստուդիա), Մոսկվայում (Ճարտարապետների կատարելագործման ինստիտուտ) և Բաքվում (Աղբբեշանի պետական գեղարվեստական ուսումնարան): Սակայն նրա հիմնական ներդրումը 20-րդ դարի հայ կերպարվեստի պատմության մեջ մեծավ մասամբ կապված է գեղանկարչական աշխատանքների հետ: Վերջին երեսուն տարիներից ապրելով Երևանում՝ նկարիչը շարունակում է հետևողականորեն ու մեծ վարպետությամբ կյանքի կոչել մանկության իր հուշերը՝ ստեղծելով ժողովրդական կյանքն ու ավանդույթներն արտացոլող սքանչելի պատկեր-նովելներ¹:

Ակներև է, որ հայ մշակույթի մեծ երախտավորների շարքում բացառիկ տեղ ու դեր ունի նաև գեղանկարիչ Հ. Ա. Կարալյանը, ում կյանքն ու գործունեությունը հայ ժողովրդի արվեստին, մշակութային առաջընթացին ծառայելու բացառիկ օրինակ է: Ճիշտ է, նրա ժամանակակից գործընկեր-արվեստագետներից ոմանք, թեև անչափ բարձր են զմահատել Հ. Կարալյանի վաստակը 20-րդ դարի հայ արվեստի ու Հայաստանի գեղարվեստական կյանքի պատմության մեջ, բայց վարպետի կյանքը, գործունեությունը, բազմաժանր ստեղծագործական հարուստ ժառանգությունն ու հայ կերպարվեստին մատուցած ծառայությունը գիտական ուսումնասիրության առարկա այդպես էլ չեն դարձել: Թեև Հ. Կարալյանն իր ժամանակակիցների կողմից երբեմն ճիշտ չի հասկացվել, ստիպված է եղել հաղթահարել նյութական և այլ անասելի դժվարություններ, բայց և այնպես հայ մշակութային գործիչների շարքում նա երջանիկ բացառություն է այն իմաստով, որ ոչ միայն վրձնել է ազգային թեմատիկ նկարներ, այլև անձամբ ներկայացրել ու մեկնաբանել դրանց հումանիստական էությունը:

Հ. Կարալյանի ինքնատիպ ու բազմաբեղուն կյանքը սկսվել է նավթավառի ժամանակներից և ավարտվել տիեզերական նվաճումների դարաշրջանում²:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հ. Ա. Կարալյանի կյանքի և գեղանկարչության համալիր ուսումնասիրության մի-

¹ Տե՛ս Հ. Ա. Կարալյան. // «Սովետական Հայաստան», Եր., 29 ապրիլի 1981, էջ 4:

² Տե՛ս *Մարալյան Հ.* Վաստակ և հուշ / «Երեկոյան Երևան», № 45, Եր., 21 սեպտեմբերի 1987:

ջոցով բացահայտել և գիտական հանրությանը ներկայացնել ցայժմ նվազ ուշադրության արժանացած և ըստ արժանվույն չզննահատված վարպետին ու նրա գեղանկարչական ստեղծագործությունները, ինչպես նաև հնարավորինս ամբողջացնել թիֆլիսահայ գեղանկարչության պատմական համապատկերը:

Աշխատանքի նպատակի իրականացումը պայմանավորեց առաջադրել հետևյալ խնդիրները.

1. Հ. Կարալյանի գեղանկարչությունը դիտարկելու ու ըստ արժանվույն ներկայացնելու համար հավաքել, լուսաբանել և գիտական շրջանառության մեջ դնել նրա վրձնին պատկանող հայտնի ու նորահայտ, անտիպ ստեղծագործություններ, նաև արխիվային նյութեր, հողվածներ ժամանակի մամուլից, արվեստագետների, ականատեսների կարծիքներ, վկայություններ և հուշեր:
2. Ուսումնասիրել թիֆլիսահայության գեղարվեստական կյանքը, մատնանշել թիֆլիսյան դպրոցի կարևորությունն ու նշանակությունը, ինչպես նաև որոշակիացնել թիֆլիսյան մշակույթն իր մեջ կրող նկարիչ Հ. Կարալյանի գեղանկարչական աշխատանքների տեղն ու դերը 20-րդ դարի հայ արվեստի զարգացման հիմնագույնին:
3. Կենսագրական փաստերի ու ամենատարբեր արխիվներում պահվող տեղեկությունների ձեռքբերման միջոցով ուսումնասիրել ու համակարգել Հ. Կարալյանի կյանքի ու գործունեության տարեգրությունը, ընդգրկում ակնարկով ներկայացնել արվեստագետի ամբողջական կենսագրությունը:
4. Հավաքված նյութի վերլուծությամբ հասկանալ և բնութագրել ուրույն ու անկրկնելի ոճ ստեղծած նկարչի աշխարհայացքի հիմնական սկզբունքները, բացահայտել նրա ստեղծագործության ակունքները, ստեղծագործական գերակայությունները:
5. Ուսումնասիրել և գնահատել Հ. Կարալյանի բազմաժանր ստեղծագործական գործունեությունը, վերհուշերի և կենցաղային ժանրի հանդես նկարչի կայուն ու անթաքույց հակվածությունը:
6. Արվեստաբանական վերլուծության միջոցով ուսումնասիրել և ներկայացնել Հ. Կարալյանի աշխատանքների հորինվածքային օրինաչափությունները, ոճական, գաղափարական, բովանդակային առանձնահատկությունները:
7. Համեմատական վերլուծության ենթարկել Հ. Կարալյանի արվեստը թիֆլիսահայ դպրոցի ժամանակակից այլ արվեստագետների ստեղծագործությունների հետ:

Թեմայի մշակվածության աստիճանը: Հ. Կարալյանի կյանքն ու ստեղծագործությունը, նրա գեղանկարչական աշխատանքները երբևէ չեն եղել հատուկ և համալիր ուսումնասիրության առարկա: Առավել շատ այս հարցին անդրադարձել են հայ գեղանկարչության մասին մամուլի հրապարակումներում և դրանցից բխող արձագանքներում: Դրանք մեծ մասամբ կրում են հրապարակախոսական և հանրամատչելի բնույթ, առանձնանում են խիստ սուբյեկտիվ դատողություններով և հասցեագրված են հասարակության լայն խավերին: Ընդհանուր առմամբ Հ. Կարալյանի ստեղծագործությանը արվեստաբաններն ավելի հաճախ սկսել են անդրադառնալ 1967-ից հետո, երբ երևանում կայացավ նրա առաջին անհատական ցուցահանդեսը: Հ. Կարալյանի արվեստին

անդրադարձող բազմաթիվ հողվածների շարքում հատկապես կարևորվում են արվեստաբանական մեկնություններ ու վերլուծություններ պարունակող Մ. Ավետիսյանի, Ե. Քոչարի, Ի. Պետրոսովի ու Կ. Բաքշիի հողվածները³, որոնք նկարչի արվեստի ներկայացման, գնահատման ու արժևորման սակավաթիվ փորձերից են:

Արվեստաբանական վերլուծության տեսանկյունից համեմատաբար արժեքավոր են 1967-ին և 1983-ին Զ. Իգիթյանի առաջաբանով կազմված հայալեզու երկու ալբոմները⁴, որոնց տեքստային նյութի ծավալը ներառում է ընդամենը յոթ էջ, և հետագա տարիների հողվածների տեսքով հատվածաբար ներկայացվել է մամուլի հայալեզու և ռուսալեզու հրապարակումներում⁵, ինչպես նաև հայերենով ու օտար լեզուներով լույս տեսած գրքերում⁶: Նշված ալբոմ-կատալոգներից երկրորդի առաջաբանը որոշ չափով կրկնում է առաջինին: Երկուսում էլ ներկայացված են Զ. Կարալյանի նկարելառճը և արվեստի ընդհանուր բնութագիրը: Դեղինակը, կենսագրական սակավաթիվ փաստերից բացի, դիտարկում է նկարչի արվեստում արտացոլված հուշերի թեման, նաև նրա արվեստի գեղարվեստական առանձնահատկությունները: Ինչևէ, բարձր գնահատելով արվեստաբանի կատարած աշխատանքները՝ հարկ ենք համարում նշել, որ որոշ դրույթներ պարզաբանվելու, առավել խորացնելու և հստակեցնելու կարիք ունեն:

Զ. Կարալյանի մասին 1974-ին փոքրածավալ (մեկ էջանոց) տեքստով գրքույկ է հրատարակել Ջ. Օհանյանը, ուր մակերեսային և հպանցիկ ակնարկի տեսքով խոսվում է Զ. Կարալյանի արվեստի ընդհանուր բնութագրի մասին⁷:

Զ. Կարալյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության տեսակետից կարևորվում է Թ. Ջուրաբյանի հեղինակած գիրքը⁸, որում ըստ արժանվույն տեղ է գտել նկարչի արվեստը լուսաբանող առանձին բաժինը: Իր ժամանակի շնչով և գաղափարներով զրված Թ. Ջուրաբյանի աշխատությունը համեմված է հեղինակի և նկարչի անձնական շփումների արդյունքում ձեռքբերված տեղեկություններով ու տպավորություններով:

³ Տե՛ս *Ավետիսյան Մ.* Նա մեզ պարզեց իր վերհուշերի աշխարհը / «Ազր» // «Երեկոյան Երևան», Թիվ 30 (10738), - Եր., 3 մայիսի 1997. - էջ 5: *Քոչար Ե.* Գրվածքի Կարալյան / Կերպարվեստի ցուցահանդեսներում: - Եր.: «Գրական թերթ», № 26, 23.06.1967: *Կոչար Ե.* Он изобразил воспоминания. / Пер. с арм. Э. Токмаджян. Из газ. «Гранан терт» // Газета «Коктейль», № 6 (65), 14-20 февраля 1998. - С. 2.; *Петросов Ե.* Иосиф Караян. В мире искусства // «Литературная Армения», № 2. - Եր. 1971. - С. 84-88.; *Бакиш Կ.* Три яблока с неба // «Литературная Армения», 5 май 1978. - Եր.: Изд. ЦК КП Армении. - С. 80-102.

⁴ Տե՛ս *Իգիթյան Զ.* Գովեսի Կարալյան (Կարալով). / Կազմ. Գ. Խոստիկյան: Դայաստանի նկարչի տուն - Եր., 1967. - 54 էջ: *Իգիթյան Զ.* Հայկական ՍՄԴ վաստակավոր նկարիչ Գովեսի Կարալյան / Կազմ. Տ. Մախմուրյան, խմբ. Գ. Խոստիկյան: Դայաստանի նկարչի տուն: - Եր., 1983. - 56 էջ:

⁵ Տե՛ս *Իցտյան Գ.* Мир воспоминаний художника // «Коммунист». № 85. - Եր., 11 апреля 1967. - С. 3.; *Իցտյան Գ.* Щедрый дар художника // «Комсомолец», № 81 (3435). - Եր. 9 июля 1967. - С. 3.; *Իցտյան Գ.* Самобытний мир Иосифа Караяна // «Комсомолец», № 14 (3435). - Եր. 1 февраля 1977. - С. 4.

⁶ Տե՛ս *Իգիթյան Զ. Մ.* Գովեսի Կարալյանից Մինսու. - Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2001. - էջ 181-193: *Igityans H.* Gleznotāji - arī tā ir Erevāna. // «Māksla» Latvijas padomju mākslinieku, arhitektu, komponistu, kinematogrāfistu savienību un teātra biedrības žurnāls. / Galvenā redaktore: I. Kreituse, Gards Nr. 3 (39). - Rīgā, Latvijas PSR, 1968. - Pp. 18-22.; *Igityan, Henrich Surenovič.* Armēnska Paleta. - Praha, 1986. - Pp. 11-12.

⁷ Տե՛ս *Օհանյան Ջ.* Գովեսի Կարալյան / Դայաստանի պետական պատկերասրահ. - Եր.: ԳԿԿ ԿԿ տպարանի հրատ., 1974. - 9 էջ:

⁸ Տե՛ս *Յուրաբյան Գ.* Волны счастья: Эссе. - Եր.: «Советакан грох», 1981. - С. 197-214.

Նկարչի ստեղծագործությունը մեծ ծավալով առաջին անգամ ներկայացվել է 2009-ին նրա դստեր՝ Իգաբելլա Կարալյանի կողմից հրատարակված ռուսալեզու «Կարալյանի աշխարհը» գիրք-ալբոմում⁹։ Նրա գրքում հոգատարությամբ հավաքվել և ներկայացվել են բազմաթիվ նյութեր՝ արվեստի մասին նկարչի մտքերը, նրա գրական փորձերը, օրագրային գրառումները, այն ամենը, ինչն արթնացնում էր նրա երևակայությունը կամ տրամադրում փիլիսոփայական տոնայնության։ Կարալյանը մեզ է ներկայանում որպես հայ մշակութային գործիչներ Սրամ Խաչատրյանի, Երվանդ Քոչարի և Սերգեյ Փարաչանովի ժամանակակիցը։ Գրքում տեղ են գտել նաև Կարալյանի մասին նրա ընկերների ու գործընկերների (Երվանդ Քոչարի, Մինաս Ավետիսյանի, Զենրիկ Իգիթյանի, Ալեքսանդր Կամենսկու, Թելման Զուրաբյանի և այլոց) հուշերն ու պատմությունները, նամակներն ու հոդվածները։ Աշխատանքը հիմնականում տեղեկատվական բնույթ ունի։ Ըստ արժանվույն գնահատելով վարպետի դստեր կատարածը՝ նկատենք, որ փոքրածավալ ակնարկների տեսքով ներկայացված հանրամատչելի նյութը որոշակիորեն համակարգելու, առավել խորացնելու և ամբողջացնելու կարիք ունի։

3. Կարալյանի մասին հիշատակումներ հանդիպում են նաև հայ կերպարվեստի պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններում, 20-րդ դարի հայ գեղանկարչության ընդհանուր և մասնավոր հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրություններում, սակայն նմանատիպ կարծիքները կրում են համընդհանուր իրողությունը արձանագրելու, փաստարկելու կամ տեղեկացնելու և ոչ թե համալիր հետազոտական կամ մենագրական բնույթ։

3. Կարալյանի արվեստի ուսումնասիրության գործում կարևոր հանգրվան է Ա. Աղայանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» աշխատությունը¹⁰, ինչպես նաև «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ աշխատության մեջ նրա հեղինակած բաժինները¹¹, որոնցում արժանի տեղ են զբաղեցնում նկարչին նվիրված հատվածները։

2010-ին լույս տեսած ևս մեկ ռուսալեզու փոքրածավալ կատալոգում¹², որի առաջաբանը հեղինակել է Ռ. Անգալադյանը, երկու էջի սահմանում ներկայացված են նկարչի արվեստի բնութագրական գծերն ու կենսագրական շրջադարձային տարեթվերը, որոնք բնույնությամբ դուրս են բերված Ի. Կարալյանի գիրք-ալբոմից։

Այսպիսով, 3. Կարալյանի արվեստն առ այսօր լիովին լուսաբանված և պատշաճ գնահատված չէ։ Չկա մի ամփոփ ու համապարփակ ուսումնասիրություն, որը կներկայացներ նրա գեղանկարչությունն ամբողջությամբ, համակողմանի, փուլերով և ուրույն խնդիրներով։ Սույն ատենախոսությունը նման համապարփակ, միանգամայն հրատապ և անհրաժեշտ հետազոտության անդրանիկ փորձն է։

⁹ Տե՛ս *Каралова И.* Мир Каралаяна. – Ер.: «Иравунк», 2009. – 168 с.

¹⁰ Տե՛ս *Աղայան Ա. Վ.* Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում։ - Եր.: «Ոսկան երևանցի», 2009. – 292 էջ։

¹¹ Տե՛ս *Աղայան Ա., Հակոբյան Զ., Հասրաբյան Ա., Ղազարյան Վ.* Հայ արվեստի պատմություն։ - Եր.: «Զանգակ-97», 2009. – էջ 286-336, 341-515։

¹² Տե՛ս *Ангаладян Р.* Иосиф Каралаян // Национальная картинная галерея Армении. - Ер.: Министерство культуры Армении, 2010. – 20 с.

Աշխատության գիտական նորույթը: Ատենախոսական աշխատանքը մենագրական բնույթի անդրանիկ ուսումնասիրությունն է, ուր առաջին անգամ փորձ է արվում առավել ամբողջական և բազմակողմանի վեր հանել Հովսեփ Կարապետյանի կենսագրությունն ու գեղարվեստական գործունեությունը, մասնավորապես վերլուծելով նրա գեղանկարչական աշխատանքների առանձնահատկությունները: Կատարված ուսումնասիրության շրջանակում:

❖ Հավաքել և համակարգել ենք Հ. Կարապետյանի մեծաքանակ՝ հայտնի ու նորահայտ, 150-ից ավելի ստեղծագործությունները՝ հնարավորինս ճշգրտելով դրանց անվանումներն ու տարեթվերը:

❖ Ուսումնասիրել և ընդգրկել ակնարկով ներկայացրել ենք Հ. Կարապետյանի ամբողջական կենսագրությունը, կյանքի և գեղարվեստական գործունեության մանրամասներն ու ամբողջական տարեգրությունը, անդրադարձել վարպետի բազմաժանր գործունեությանը:

❖ Գիտական շրջանառության մեջ ենք դրել նկարչի անձնական և այլ արխիվային վավերագրերը, նաև հին մամուլից քաղված փաստեր ու տեղեկություններ, նորահայտ բազմաթիվ նյութեր, ժամանակակիցների և հարազատների վկայություններ ու հիշողություններ, որոնք ներկայացնում ու համալրում են Հ. Կարապետյանի արվեստի պատմությունը:

❖ Երևան ենք բերել նկարչի ստեղծագործական ժառանգության բազում մոռացված, մասնագետների ուշադրությունից վրիպած, անհայտ կամ քչերին հայտնի գեղանկարչական աշխատանքներ:

Աշխատության աղբյուրները: Ուսումնասիրության համար հիմք է ծառայել առաջին հերթին Հ. Կարապետյանի գեղարվեստական ժառանգությունը, այդ թվում նկարչի դատեր՝ Ի. Կարապետյանի մեզ սիրահոժար տրամադրած, ինչպես նաև մի շարք մասնավոր հավաքածուներում պահվող (բազմամյա հավաքչական դժվարին աշխատանքի արդյունքում մեզ հասանելի դարձած) բազմաթիվ անտիպ աշխատանքներ: Բացի այդ, լայնորեն օգտագործվել է Հ. Կարապետյանի նվիրված մասնագիտական և տեղեկատու գրականությունը (հանրագիտարաններ, բառարաններ և այլն), ինչպես մայրենի, այնպես էլ օտարալեզու մամուլը (թերթեր, ամսագրեր, հանդեսներ), խորհրդակից և թիֆլիսահայ կերպարվեստի ընդհանուր ու մասնավոր հարցերին վերաբերող բազմաթիվ մենագրությունները, նկարչի ստեղծագործության ու ցուցահանդեսների մասին տարբեր լեզուներով հրատարակված հոդվածները, ալբոմները, կատալոգները, վարպետի դատեր վկայություններն ու հիշողությունները: Օգտվել ենք նաև համացանցային կայքերից: Դիմել ենք արխիվային վավերագրերի, մասնավորապես ՀՀ Ազգային արխիվի, Հայաստանի ազգային պատկերասրահի հուշածեռագրային բաժնի, նկարչի անձնական արխիվի նյութերի օգնությանը:

Աշխատության մեթոդաբանությունը: Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել խորհրդային և ժամանակակից արվեստագիտական գրականության մեջ տեղ գտած գեղանկարչության տարբեր ոճերի վերաբերյալ հատուկ գիտական ուսումնասիրություններն ու հիմնավորված դրույթները: Աշխատության հիմքում ընկած է պատմականության գիտական սկզբունքը. հաշվի են առնվել կոնկրետ ժամանակաշրջանը և այս կամ այն փուլին բնորոշ գաղափարական, մշակութային եղելություններն ու միտումները, պահպանված է ժամանակագրական հաջորդականությունը:

3. Կարալյանի կյանքն ու գործունեությունը առավել հանգամանորեն լուսաբանել ենք կենսագրական ընդարձակ ակնարկով, իսկ գեղանկարչությունը ներկայացրել ենք ըստ շրջանների՝ վաղ շրջան, միջին շրջան և ուշ շրջան: Ամհրաժեշտ դեպքերում զուգահեռներ ենք անցկացրել 3. Կարալյանի և նրա սերնդակից նկարիչների միջև: Կենտրոնացել ենք այն աշխատանքների վրա, որոնք առավել ցայտուն են ներկայացնում նկարչի աշխարհընկալումը, անհատական ձեռագիրն ու փիլիսոփայությունը, ոճական ըմբռնումների զարգացումը: Փորձել ենք հնարավորինս ուղղել բոլոր այն անճշտությունները, որոնք մեզ հանդիպել են՝ կապված նկարչի կենսագրական տարեթվերի, կոնկրետ աշխատանքների թվագրման և անվանման հետ:

Աշխատանքը կատարելիս օգտվել ենք արվեստագիտության մեջ վաղուց կիրառվող էմպիրիկ-նկարագրական, քննական-համեմատական, արվեստաբանական և տեսական վերլուծության մեթոդներից, իսկ կոնկրետ աշխատանքներ վերլուծելիս դիմել ենք ոճաբանական, ձևաբանական, կառուցվածքային, ինչպես նաև պատկերաբանական մեթոդներին:

Աշխատության գործնական նշանակությունը: Աշխատության դրույթներն ու արդյունքները կարող են լրացնել 20-րդ դարի թիֆլիսահայ կերպարվեստի, հատկապես գեղանկարչության պատմության էջերը, ինչպես նաև կիրառվել 3. Կարալյանի արվեստին վերաբերող հետագա գիտահետազոտական աշխատանքներում, հայկական գեղանկարչության ուսումնասիրություններում: Բացի այդ ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել 20-րդ դարի թիֆլիսահայ գեղանկարչության պատմության դասընթացներում:

Աշխատության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնում: Աշխատանքի հիմնական դրույթները զեկուցվել են միջազգային գիտաժողովում (Երևան, 10-12 հոկտեմբերի, 2014), առանձին հոդվածների տեսքով հրապարակվել են գիտական հանդեսներում ու ժողովածուներում: Ատենախոսության թեմայի շուրջ առանձին դասախոսություններ են կարդացվել ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի ուսանողների համար:

Աշխատության կառուցվածքը: Ներկայացվող ատենախոսական աշխատանքը շարադրված է 131 համակարգչային էջի վրա, կազմված է ներածությունից, երկու զլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որում ներառված են 3. Կարալյանի ստեղծագործությունների տարեգրությունը, գեղանկարչական աշխատանքների վերատպությունների ցանկը, պատկերագիրը: Օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 187 աղբյուր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, գնահատված է ուսումնասիրվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված է գրականության տեսությունը, մատնանշված են աշխատանքի գիտական նորույթը, մեթոդաբանությունն ու գործնական արժեքը, ինչպես նաև տրված է ատենախոսության կառուցվածքը:

ԳԼՈՒԽ 1. ԹԻՖԼԻՍԱՅԱՅ ՆԿԱՐԻՉ ՀՈՎԱՏՓ ԿԱՐԱԼՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Թիֆլիսի ընդհանուր բնութագիրը և թիֆլիսահայության գեղարվեստական կյանքը

20-րդ դարի սկզբին Թիֆլիսը նաև հայ մշակույթի զարգացման առաջատար կենտրոնն էր: Այն հանդիսանում էր հայկական մշակույթի կարևորագույն օջախներից մեկը, որի դերը մեր ժողովրդի կյանքում անգնահատելի է:

Թիֆլիսում ծնվել կամ կյանքի մեծ մասը անց են կացրել շատ հայ նկարիչներ, գրողներ, բանաստեղծներ, երաժիշտներ, հասարակական գործիչներ:

Թիֆլիսահայ կերպարվեստի դպրոցի ձևավորման գործընթացում զգալի ներդրում ունեցան հատկապես ինքնատիպ ձեռագիր ունեցող, ստեղծագործական շնորհով օժտված, Ռուսաստանում ու Եվրոպայում կրթություն ստացած արհեստավարժ նկարիչները՝ հայկական բնանկարաց հարվեստի հիմնադիրներ Գևորգ Բաշինջաղյանը (Թիֆլիսում առաջին անհատական ցուցահանդեսի հեղինակ), Գիգո Շարբաբջյանը, Եղիշե Թաղևոսյանը, Հարություն Շամշինյանը, Հմայակ Հակոբյանը, Արշակ Ֆեթլաճյանը, Փանոս Թերլեմեզյանը, Վարդգես Սուրենյանցը, Վահրամ Գայֆեճյանը, Գևորգ Գրիգորյանը, Հովսեփ Կարալյանը և ուրիշներ, ինքնուս վարպետներ Վանո Խոջաբեկյանը, Կարապետ Գրիգորյանցը, Թիֆլիսում համեմատաբար կարճ ժամանակահատված ապրած Հովհաննես Այվազովսկին, 20-րդ դարի հայ արվեստի վարպետաց վարպետներ Մարտիրոս Սարյանը, Երվանդ Քոչարը, Գեորգի Յակուլովը, ինչպես նաև այսօր ոչ այնքան հայտնի մի շարք նկարիչներ (Վասիլի Պիրադովը, Մարալ Բեկմարմաչևան, Միքայել Խունունցը, Ղազարոս Արտազյանը, Սեդրակ Առաքելյանը, Սարգիս Խաչատրյանը, քանդակագործներ Միքայել Միքայելյանը, Ստեփանոս Թարխարայանը): Եվ այդ նկարիչներին, ում ամբողջ կյանքն ու ստեղծագործությունը կամ կյանքի որոշակի փուլեր կապված են եղել Վրաստանի հետ, բախտ է վիճակվել դառնալու հայ նոր կերպարվեստի, նրա թեիլիսյան հոսանքի ձևավորման գործընթացի մասնակիցը, արվեստագետներ, որոնց ջանքերից ծնունդ առավ ինքնօրինակ մի երևույթ, որն իրավամբ հարստացրեց թե՛ հայկական, թե՛ վրացական և թե՛ համաշխարհային արվեստը:

Թիֆլիսյան այս բոհեմային միջավայրին է պատկանում նաև Հ. Կարալյանը, ով իր ստեղծագործության նյութն է դարձրել հին Թիֆլիսը: Նա ծնվել է այդ միջավայրում և ամեն ինչով հարագատ է նրան: Նկարիչն անհունորեն սիրել է իր ծննդավայրը: Աչքը բաց է արել այստեղ, մարդկանց ճանաչել է այստեղ և այստեղ է արմատներ արձակել: Դրանով է պայմանավորված այն փաստը, որ «նրա ստեղծագործություններում պատկերման հիմնական նյութը ծննդավայր Թիֆլիսն ու մանկության օրրան Կախեթն են՝ իրենց հայաբնակ թաղամասերով ու միջավայրով, ավելի ուշ՝ արդեն Հայաստանը իր բնությամբ և մարդկանցով»¹³:

1.2. Հովսեփ Կարալյանի կյանքի ուղին

Առանձնահատուկ արժեք ունի հատկապես նկարչի կենսագրությունը ներկայացնող սույն ենթագլուխը, որը մենք ներկայացրել ենք հնարավորինս

¹³ *Պալթյան Լ.* Հովսեփ Կարալյան: Պատումներ պատկերներով // «Ազգ». - Եր., 13 մայիսի 1997. - էջ 6:

ընդգրկումն ականարկի տեսքով, քանզի այն առաջին համապարփակ ուսումնասիրությունն է՝ նվիրված սույն հիմնախնդրին:

Չովսեփ Արտեմի Կարալյանը (Իոսիֆ Կարալով) ծնվել է 1897 թվականի փետրվարի 1-ին Թիֆլիսում, հայկական մեծ պվանդույթներ ունեցող ծառայողի ընտանիքում:

Նկարիչն իր մանկությունն ու պատանեկությունը անցկացրել է հին Թիֆլիսում՝ Կրաստանի հայաբնակ Սագարեթ ցյուղում: Սագարեթյուն շատ հայեր էին բնակվում, կային հայկական վանքեր¹⁴: Նրա մանկությունը ընթացել է այս միջավայրում: Եվ Յ. Կարալյանը, ինչպես Թիֆլիսում ապրած հայ մշակույթի մյուս գործիչները, հիմնականում հայկական միջավայրի երգիչ է:

Յ. Կարալյանը սովորել է Թիֆլիսի տղամարդկանց գիմնազիայում, որն ավարտել է 1917 թ.¹⁵: Դեռ մանկուց նկարիչն անընդհատ որոնումների մեջ է եղել, փորձել է գտնել իր ներշնչանքի աղբյուրը, իսկ գեղանկարչության հանդեպ ունեցած սերը արվեստագետի մոտ շատ վաղ է արտահայտվել:

Գեղանկարչության համրեպ ունեցած սերը 1914-ին Յ. Կարալյանին բերել է Թիֆլիսի՝ Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության գեղանկարչության և քանդակագործության դպրոց, որտեղ նա սովորել է մինչև 1915 թվականի կեսերը¹⁶: Դպրոցում նրան նկարչություն են դասավանդել Օսկար Շենքլինգը, Եղիշե Թադևոսյանը, իսկ քանդակել սովորեցրել է Յակով Նիկոլաձեն:

Յ. Կարալյանի հետ նույն դպրոցում են սովորել հայկական խորհրդային արվեստի մշանավոր գործիչներ՝ ճարտարապետ Կարո Չալաբյանը, գեղանկարիչներ Երվանդ Քոչարը, Գևորգ Գրիգորյանը, Լադո Գուդիաշվիլին: Նույն դպրոցում են սովորել նաև Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, Չակոբջան Դարիբջանյանը, Ռուբեն Շահվերդյանը և այլոք: Նրանց բոլորին վիճակված էր մուտք գործել մեծ արվեստ:

Յ. Կարալյանը մինչև կյանքի վերջ պահել է մտերմությունն այս նկարիչներին հետ և շատ թանկ է գնահատել նրանցից յուրաքանչյուրի հետ կապված բոլոր հուշերը:

Բնատուր տաղանդը նրա մեջ ձայն է առել պատանի հասակից: 1917-ից սկսած, երբ ընդամենը 20 տարեկան էր, սկսում է պարբերաբար մասնակցել թիֆլիսյան ցուցադրումներին, իսկ 1922-ից՝ արդեն բոլոր գեղարվեստական ցուցահանդեսներին:

1922-ից Կարալյանը սկսում է նկարչություն դասավանդել Թիֆլիսի թիվ 86 աշխատանքային դպրոցում և արդեն 1924-ին նա գծանկարչության դասեր էր տալիս այն բոլոր դասարաններում, որոնցում ուսումնական ծրագրով նախատեսված էր այդ առարկան: 1922-ից Թիֆլիսում անդամակցում է Չայաստանի նկարիչների (այսպես կոչված «РАБИС»-ի՝ «Կերպարվեստի աշխատողների») միությանը: 1925-ից ընդունվում է Թիֆլիսի «Չայարտուն» (Չայկական արվեստի տուն), մասնակցում Թիֆլիսում անցկացվող բոլոր ցուցահանդեսներին,

¹⁴ Տես *Չարությունյան Կ.* Վերհուշի կտավներ // «Չայրեմիքի ծայն», № 27. - Եր., 28 հունիսի 1967. - էջ 8:

¹⁵ Տես Краткая автобиография Иосифа Артемевича Каралова // ՉԱՊ հուշածեռագրային բաժին, Ֆ-76, Ի-2426:

¹⁶ Տես *Ստամբոլյան Ա.* Մանկության արհեստների ճամփորդը // «Քրիստոնյա Չայաստան», Ա. քիվ 19 (327). - Վարդաշապատ, հոկտեմբեր 2010. - էջ 7: *Ղզնունի Ղ.* Չայ կերպարվեստագետներ: Չամառոտ բառարան / Խմբ. Մ. Մ. Ղազարյան. - Եր.: «Լույս» հրատ., 1977. - էջ 224:

1926-ին՝ Թիֆլիսի օպերայի և բալետի թատրոնում «Կարապի լիճ» բալետի էսքիզների համար հայտարարված մրցույթին¹⁷: 1926 թ. Յ. Կարալյանը համագործակցում է Թիֆլիսի հայկական դրամատիկական թատրոնի ռեժիսոր Արմեն Գուլակյանի հետ¹⁸: Այնուհետև ուսումը շարունակելու նպատակով 1927-ին տեղափոխվում է Մոսկվա: Մոսկվայում Յ. Կարալյանն ընդունվում է Վ. Սիդանոն-Երիսթավու վճարովի ստուդիա (արվեստադպրոց): Մոսկվայում նա տեղավորվում է Յայկական մշակույթի տանը:

1928-1939 թթ. եղել է Մոսկվայի Յայկական մշակույթի տան գեղխորհրդի քարտուղարը¹⁹: «Արմենկիմոն» կինոստուդիայում նկարահանված «16-րդ» ֆիլմի (1928 թ., ռեժ. Պ. Բարխուդարյան) կինոպլակատի տպագրության համար հայտարարված մրցույթը շահելուց հետո՝ 1929-ին Յ. Կարալյանի ստեղծած պլակատը նկարչի առաջին առնչությունն է կինոյին:

1929-ին նա ռեժիսոր Ա. Գուլակյանի համար իրականացրել է «1881թ.»-ը պիեսի բեմադրության ձևավորումը, որն արժանացել է վերջինիս հավանությանը, սակայն հիշյալ պիեսը (մեզ համար անհայտ պատճառներով) ցավոք այդպես էլ չի բեմականացվել²⁰:

1930-1933 թթ. Յ. Կարալյանը վերադառնալով Վրաստան՝ աշխատում է «Սախելգամի»-ում (վրաց. հրատարակչություն):

1936-ին մասնագիտական կրթությունը շարունակելու նպատակով Յ. Կարալյանն ընդունվում է Մոսկվայի գեղարվեստատեխնիկական ինստիտուտի գրաֆիկայի բաժինը (ղեկավարներ՝ Վլադիմիր Ֆավորսկի և Ալեքսեյ Կրավչենկո): Միաժամանակ աշխատակցելով ռեժիսոր Ռ. Սիմոնովին և կոմպոզիտոր Ա. Խաչատրյանին Մոսկվայի հայկական պետական դրամատիկական ստուդիայում՝ 1937-ին ձևավորում է Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ» պիեսը (բեմադրված 1935 թ., ռեժ. Ռ. Սիմոնով):

Ինստիտուտն ավարտելուց մեկ տարի անց նկարչի ստեղծագործական գործունեությունն ընդհատվում է պատերազմի պատճառով: 1941-ին Մոսկվայից տարհանվելիս նա իր աշխատանքները թողնում է հանրակացարանի սենյակում այն ակնկալիքով, որ հետո կտեղափոխի Թիֆլիս, սակայն դրանք բոլորը այրվում են պատերազմյան խստաշունչ ծմռանը:

1941-1944 թթ. արվեստագետը Երևանում էր: Ձևավորում է շատ զրքեր և մասնակցում է հանրապետական զրեթե բոլոր և միութենական ու արտասահմանյան շատ երկրների ցուցահանդեսների²¹: 1942-ին արդեն ԽՍՀՄ նկարիչների միության անդամ էր: Բացի այդ, Յ. Կարալյանը պլակատի մեծ մասնագետ էր և իր արժեքավոր լուսան է ներդրել այդ գործի զարգացման մեջ Յայաստանում:

¹⁷ Ств Личная карточка члена (кандидата) Союза Советских Художников Иосифа Артемовича Каралова // Յայաստանի ազգային արխիվ, Ֆ-1352, ցուցակ-1, գործ 109:

¹⁸ Ств *Ստեփանյան Գ.* Յայ մշակույթի գործիչներ: Կենսագրական բառարան: Երեք հատորով: Գ. Բ, Ժ, Ս. - Եր.: «Սովետական գրող», 1981. - էջ 91: *Միդդայան Գ.* Արվեստի մտերմիկ լեզվով // «Ավանգարդ», № 72, - Եր., 17 հունիսի 1967. - էջ 4: Գ. Ա. Կարալյան // Եր.: «Սովետական Յայաստան», 29.04.1981. - էջ 4:

¹⁹ Ств Յոլվետի Արտեմի Կարալյան. // Յայաստանի ազգային արխիվ, Ֆ-1352, ցուցակ-1, գործ 109:

²⁰ Ств Краткая автобиография Иосифа Артемовича Каралова // ՀԱՊ հուշածեռագրային բաժին, Ֆ-76, Ի-2426:

²¹ Ств *Մանուկյան Ռ.* Անցյալից Ջեֆաթներ հյուսող իրաշալի սրնգահարը: - Եր.: «TV ալիք», № 28, 4-10.06.2005. - էջ 17:

1947-ին տեղափոխվում է Բաքու: 1952-1953 թթ. Յ. Կարալյանը կրկին Սոսկվայում է, իսկ 1953 թ-ի գարնանը, վերջապես, տեղափոխվում է Երևան՝ տոգորված Հայաստանում աշխատելու մեծ ցանկությամբ²²:

Քաղաքամայր Երևանում վերջնականապես հաստատվելուց 14 տարի անց՝ 1967-ին Հայաստանի նկարչի տան ցուցասրահում բացվում է Յ. Կարալյանի առաջին անհատական ցուցահանդեսը, որից հետո ՀՍՍՀ Գերագույն Սովետի նախագահության 1967 թ. նոյեմբերի 1-ի հրամանագրով Հովսեփ Արտեմի Կարալյանին շնորհվում է Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարչի պատվավոր կոչում²³:

1967-ի ցուցահանդեսից հետո Յ. Կարալյանը մասնակցում է կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի ստեղծմանը, որն էկրան է բարձրանում 1969-ին:

Նկարիչը մահանում է ավտոմեքենայի վրաերթից 1981 թ. ապրիլի 24-ին:

Իր 84-ամյա կյանքի ընթացքում Յ. Կարալյանն արժանացել է բազմաթիվ պատվոգրերի ու մրցանակների:

ՊԼՈՒԽ 2. ՀՈՎՍԵՓ ԿԱՐԱԼՅԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Կարալյանի գեղանկարչության բնութագրական գծերն ու առանձնահատկությունները

Յ. Կարալյանն ավագ սերնդի վարպետների այն դասից է, ովքեր առավելագույնս հարստացրեցին և երկար տարիների վարկաբեկումնից ու գռեհկացումից հետո «վերականգնեցին» ժանրային գեղանկարչությունը: Նկարչի նախընտրած ժանրը կենցաղային տեսարաններն են: Դրանք յուրօրինակ գեղանկարչական մանրապատումներ են մանկության հիշողություններից, որոնց կենդանի պատկերներով նա ցույց է տալիս հասարակ ժողովրդի թախիծով լի կյանքն ու կենցաղը և այդ թախիծի միջից պոռթկացող մարդասիրությունն ու վավատեսությունը:

Կենցաղային ժանրին դիմելը Յ. Կարալյանի համար լոկ միջոց կամ ձև է արտահայտելու բազում տարիների ընթացքում հասունացրած իր աշխարհընկալումը: Վերջինիս ամենակարևոր բաղադրիչը հիշողություններն են, և հավանաբար ճիշտ կլիներ ասել, որ Յ. Կարալյանը վերհուշերի նկարիչ է: Անա թե ինչպես է արտահայտվել Յ. Կարալյանն իր իսկ արվեստի մասին. «Իմ արվեստի հիմքը հուշերն են և հուզական ապրումները... Ես ո՛չ ազգագրագետ եմ, ո՛չ էլ կենցաղագիր, ես իմ ունեցած դրական ապրումներով առաջ եկած և իմ կողմից ապրված վերհուշերի նկարիչ եմ»²⁴:

Վերհուշերի փիլիսոփայություն և վերաբերմունք առօրեականի՝ որպես ստեղծագործության վսեմ օբյեկտի հանդեպ. այդպիսին են մեզ ներկայանում Յ. Կարալյանի արվեստի ճանաչողական ակունքները:

²² Տե՛ս *Միրզախանյան Ռ.* Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը / Ռ. Միրզախանյան, Յ. Հակոբյան. - Եր.: «Տիգրան Մեծ», 2014. - էջ 424:

²³ Տե՛ս Указ Президиума Верховного Совета Армянской ССР о присвоении группе художников республики почетного звания заслуженного художника Армянской ССР / Председ. **Н. Арутюнян**, Секр. **А. Галстян**. // «Коммунист», Ер., 2 ноября 1967.

²⁴ Տե՛ս *Կարալյան Կ.* . - Եր.: «Իրավունք», 2009. - С. 13-14.

Նա նկարում է հուշեր՝ դրանք առարկայացնելու և այդպիսով՝ իր հույզերը պահպանելու, ինչպես նաև ուրիշների համար հասանելի դարձնելու նպատակով: 3. Կարալյանի պատկերները դիտողի մեջ ծնունդ են անբացատրելի, խորհրդավոր, անբնական պահեր: Գույների յուրահատուկ արտահայտչականություն, կոմպոզիցիաների կարալյանական մտահղացում և կառուցում, գծի սեփական ըմբռնում: 3. Կարալյանի արվեստում բացառիկ տեղ են զբաղեցնում սյուժետակենցաղային բնույթի կոմպոզիցիաները: Հատկապես նրանցում էլ արտահայտված է նկարչի ստեղծագործական անհատականությունը: Նկարիչը, խորապես ուսումնասիրելով ու յուրացնելով հին վարպետների կոմպոզիցիաներ կառուցելու սկզբունքները²⁵, ստեղծել է իր սեփական գեղանկարչական հորինվածքները:

3. Կարալյանը «պրիմիտիվիստների» շարքին չի դասվում և չի էլ կարող դասվել: Նա ժամանակակից գեղանկարչության բոլոր գաղտնիքներին ծանոթ շատ նրբագգգ վարպետ է, ստեղծում է զուսանկարչական բարդ հորինվածքներ և ռիթմիկ ներդաշնակություններ: Որոշակի կոնկրետ սյուժեների հանդեպ նկարչի վերաբերմունքն ընկալվում է որպես յուրօրինակ գեղարվեստական հնարք, իսկ դարերով ձևավորված կենցաղի այդ հնարքները նրան թույլ են տալիս իր նկարներում յուրովի փոխանցել ու պահպանել արևելյան կուլտիտին բնորոշ, մանկությունից նկարչին ծանոթ և նրա կողմից սիրված բարքերն ու սովորույթները²⁶: Նա կարծես կրկնելով մարդու և ապրելակերպի հանդեպ արևմտաեվրոպական պոստռենեսանսյան արվեստագետների մոտեցումը՝ տալիս է Արևմուտք-Արևելք երկխոսության իր տեսլականը, ճշգրիտ վերարտադրում է մարդկային ամենատարրական կենսաձևը, որպիսին թերթելով խնդրո առարկա ժամանակաշրջանի ֆոտո արխիվները՝ հանդիպում են Թիֆլիսում և Հայաստանում:

2.2. Հովսեփ Կարալյանի գեղանկարչական աշխատանքները

Սույն ենթագլուխն ընդգրկում է նկարչի ստեղծագործական գործունեության փուլերի ժամանակագրական պարբերացումը:

2.2.1. Վաղ շրջան (1913-1935 թթ.)

19-րդ դարի վերջերից մինչև 20 հարյուրամյակի սկիզբը 3. Կարալյանին սնել է Թիֆլիսի գեղարվեստական մշակույթը, սակայն իր ստեղծագործական առաջին քայլերից նա անկախ է եղել:

3. Կարալյանի վաղ շրջանի ստեղծագործությունները վկայում են բներանգի նրա ըմբռնման ուժի և ինքնատիպության, վրձնահարվածի վստահության, նյութի ոգեշունչ մեկնաբանության մասին: Ապշեցնում է նկարչի կենսահաստատ զորությունը: 1910-ականներից սկսած՝ ստեղծագործական բուռն վերելք ապրող նկարիչը նատյուրմորտների, դիմանկարների, թեմատիկ կոմպոզիցիաների շարքեր է ստեղծում, ուր զուգորդվում են հասուն վարպետությունն ու ճշմարիտ իրապաշտությունը:

²⁵ Տե՛ս *Аппатов М. В.* Художественные проблемы итальянского Возрождения. - М.; Изд. «Искусство», 1976. - 288 с.

²⁶ Տե՛ս *Paixenumeiın A. И.* Каралян: Живопись // Ред. Л. Бубнова. - М.: «Советский художник», № 4-16, 20.07.1971.; *Matevosian Grant*, The Orange Herd / Translated by Fainna Glagoleva. - Moscow, USSR: Progress Publishers, 1976., p. 33.

1913-ին դեռևս պատանի Յ. Կարալյանն իր «Կինտոների պարը» նկարով ամուր հիմքերի վրա է դնում դեպի մեծ արվեստ տանող ճանապարհի իր առաջին հիմնաքարը: Թերևս, այդ նկարով էլ նա միանգամից թևակոխում է ստեղծագործական հասունություն:

Յ. Կարալյանի ստեղծագործական մտածելակերպի ամենավառ վկայություններից են մոր և մանկան թեմայով արված նկարները, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել «Հիվանդ երեխան» (1917), «Մայրություն» (1967), «Բաղնիքում» (1967), «Խոհանոցում» (1979) նկարները:

Վերլուծելով Կարալյանի վաղ շրջանի գործերը՝ հանգում ենք այն եզրակացության, որ գեղանկարչական արվեստի բնագավառում նա առաջին հերթին հմուտ և նուրբ դիմանկարիչ է: Աշխատելով այս ժանրում՝ նա դիմանկարները մշակել, զարգացրել և հասցրել է գեղարվեստական նրբագեղության: Նրա դիմանկարները չեն պատկերում միայն տվյալ անհատի արտաքինը, այլ թափանցում են ավելի խորը, բացահայտում և դրսևորում ներքին հոգեկան առանձնահատուկ գծերը: Այդպիսիք են նրա «Փոքրիկ Նոռայի դիմանկարը» (1920), «Ազուլյանի դիմանկարը» (1924), 1930-ականներից արված «Շիրվանգաղեի դիմանկարը», «Արծվիկ Ալիխանյանի դիմանկարը», ինչպես նաև «Նկարչի կնոջ դիմանկարը», «Հրաչյա Գրիգորյանի մոր դիմանկարը» անթվակիր աշխատանքները:

2.2.2. Միջին շրջան (1936-1952 թթ.)

Մեր բազմամյա հետևողական աշխատանքով հավաքված նկարների քանակությունը մեզ թույլ տվեց առանձնացնել նկարչի միջին շրջանի ստեղծագործություններին նվիրված ենթաբաժին, որը բացվում է նկարչի վրձնած «Ինքնադիմանկար» (1936) աշխատանքով: Հարկ է նշել, որ ինքնադիմանկարները նկարչի արվեստում հազվադեպ են: Դրանցում անսխալ երևում է վարպետի կերպարը՝ իր ամբողջ հոգեկերտվածքով: Նշմարվում են հոգևոր բարձր բարոյականությամբ օժտված վեհ մարդու գծերը՝ լի ստեղծագործական էներգիայով, վճռականությամբ և հավատով:

Այս շրջանի պահպանված գործերից մեզ են հասել նաև Յ. Կարալյանի փոքրաչափ նատյուրմորտները, որոնցում նկարիչը պատկերել է կենցաղային հասարակ իրեր, իսկ ավելի հաճախ՝ պտուղներ, մրգեր ու բանջարեղեն: Նկարչի «Կժով նատյուրմորտ» (1942), «Տանձով նատյուրմորտ» (1950) աշխատանքներին բնորոշ են մութ, խավար հիմնագույնը, սեղանին դարսված կամ խնամքով խմբավորված առարկաների ու պտուղների վրա ձախ կողմից ընկնող լույսի թեթև թրթիռը, խավարի խորքում, ասես, մարմնող հյութեղ գույները: Չնայած նկարչի աշխատանքներում անվերջ տարբերակվում ու հարափոխվում են միևնույն մոտիվները, այդուհանդերձ դրանք չեն ծանձրացնում դիտողին, քանզի նա ամեն անգամ նոր, թաքնված գեղեցկություն է հայտնաբերում ոչ միայն «բնության բարիքների», այլև կենցաղային շատ սովորական, նույնիսկ հնամաշ առարկաների կամ պիտույքների մեջ: Նկարիչը ոչ միայն մեծագույն բժախնդրությամբ ընտրել ու դասավորել է պատկերված իրերն ու առարկաները, այլև բացառիկ նշանակություն է տվել դրանց անսովոր լուսավորմանն ու գունավորմանը:

Կնոջ, որպես կյանք տվող և կյանք կրող, որպես ոչ միայն ֆիզիկական գեղեցկության, այլև ամենաբարձր բարոյական սկզբի մարմնավորման խնդիրն

Յ. Կարալյանը բազմիցս է անդրադարձել: Նկարչի միջին շրջանի ստեղծագործություններից «Յանդերծարանում» (1950) նկարը յուրովի առանձնանում է մյուսներից: Սույն կտավում Յ. Կարալյանը անվերջ գովերգում է կնոջ մերկ մարմնի ներդաշնակությունը, խոնարհվում նրա աստվածային գեղեցկության առջև, և պատահական չէ, որ կերպարն իր զուգահեռներն ունի Ա. Բաժբեուկ-Մելիքյանի «Մերկ Լիդան» (1940), «Պառկած աղջիկը» (1946) կտավների կանանց հետ: Յ. Կարալյանին և Ա. Բաժբեուկ-Մելիքյանին հարազատացնում է մերկ կնոջ կերպարի գովերգումը: Նրանց կտավներում պատկերված բարձրահասակ, հանդիսավոր, մարմնեղ կանայք արտացոլում են կնոջ արդեն լիովին հասուն վիճակը՝ ճերմակ մաշկով, մարմնի կլորավուն հատվածներով: Իսկ սլացիկ, կատապի պարանոցով կանայք գրեթե խորթ են նկարիչներին:

2.2.3. Ուշ շրջան (1953-1981 թթ.)

Եվ այսպես, 1953-ին Երևան տեղափոխվելը նկարչի համար իրապես շրջադարձային եղավ, կարելի է ասել՝ ճակատագրական: Ծնվում էր նոր և մեծ նկարիչը, ում ստեղծագործական շնորհները երևում էին 1920-1930-ական թվականների գեղանկարչական աշխատանքներում, բայց այժմ նրա ստեղծագործությունը ձեռք էր բերում ներքին ազատություն:

Ինչպես արդեն նշել ենք 1.2. ենթագլխում, Յ. Կարալյանի լավագույն կտավների անուղղելի, ցավալի կորուստը և մի շարք այլ պատճառներ նկարչին երկար ժամանակով հանում են հավասարակշռությունից՝ հնարավորություն չտալով կենտրոնանալու: Չկարողանալով հաշտվել կորստյան մտքի հետ՝ ուշ շրջանում Յ. Կարալյանը հիշողությամբ վերականգնում է ոչ միայն մանկության վերհուշերը, այլև անցյալում ստեղծած նկարները: Գուցե դա է պատճառը, որ նա տարիների ընթացքում նորից ու նորից անդրադառնում է միևնույն թեմային՝ փորձելով գտնել այն ամենակարևորը, էականը, ինչն ընդմիշտ կորսված է: Թեման մնում է նույնը, սակայն փոխվում են կոմպոզիցիոն լուծումները, դրդապատճառները, իսկ երբեմն նկարիչը կանխամտածված չի փոխում որևիցե տարր. միայն մանրակրկիտ զենման դեպքում հնարավոր է գտնել հազիվ նշմարելի տարբերություններ՝ այն էլ միայն առարկաների կամ երևույթների մեկնաբանման մեջ: Ասվածի մեջ համոզում են Յ. Կարալյանի «Յացթուխները», «Բաղնիքում», «Կինտոների պարը», «Մոր վիշտը», «Չվի վաճառք», «Չուչխելի (սուջուխ) են կախում» և բազմաթիվ այլ թեմաներով տարբեր տարիներին արված աշխատանքները:

Բազմաթիվ նատյուրմորտներից, դիմանկարներից և թեմատիկ կոմպոզիցիաներից գատ Յ. Կարալյանը վրձնել է նաև մի շարք էտյուդներ, որոնցում նա ավելի շատ իդեալիստ է (գաղափարապաշտ), ռոմանտիկ, քան՝ իրապաշտ: Նկարիչը սիրում է բնության գեղեցիկ տեսարանները, ուր կան ներդաշնակ գույներ, պայծառ, վճիտ ու թափանցիկ օր: Պայծառ գույների նուրբ երանգներով, լուսաստվերի կենսառատ խաղով ու վրձնի ազատ, լայն շարժումներով կատարված այս նկարչագեղ աշխատանքներն էտյուդային թարմ ու կենսառատ, թեև «անավարտ» տպավորություն են թողնում:

Այսպիսով, Յ. Կարալյանն իր արվեստով ապացուցում է, որ ժամանակակից լինելու համար պարտադիր չէ վրձնել ժամանակակից մեթոդներով, որ ազգայինը կամ արդիականը սեփական ասելիք ունենալու և ասելիքին զուգակցվող որակի մեջ է, որն արտահայտվում է ինչպես նկարչի գունանկարի հա-

գեղավածության, գույների խոսուց, արտահայտիչ հարաբերակցության, հողեղեն, զսպված կոլորիտի, այնպես էլ ընդհանրապես նրա գեղանկարչական մտածելակերպի, սկզբունքի մեջ, որ բնավ էլ պարզունակ (պրիմիտիվ) չէ, ինչպես շատերը թյուրիմացաբար կարծում են: Նկարիչը ձևի արտահայտչականության է հասնում ոչ թե ընդօրինակման, այլ աշխարհի՝ ազգային բնույթով պայմանավորված յուրօրինակ ընկալման միջոցով: Նրա ստեղծագործական նախասիրությունները դրսևորվում են գեղարվեստական կենտրոնացման և պարզության մեջ: Ձևի արտաքին պարզեցումը և ավանդական այուժեները խոսում են «թիֆլիսյան դպրոցի» պրիմիտիվիստական գեղանկարչության հետ նկարչի առնչության մասին, սակայն արհեստավարժությունն ու մեծահմուտությունը, որ բացահայտ դրսևորվում են նրա գործերում, և գեղանկարչական մտածողությունը թույլ են տալիս Հ. Կարալյանի ստեղծագործությունը գնահատել արդիական արվեստի չափանիշներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հ. Կարալյանի գեղանկարչությունը 20-րդ դարի հայ կերպարվեստում ունի իր ուրույն տեղն ու դերը: Նկարչի աշխատառձի, պատկերավորման յուրաձևության արմատները գտնվում են ոչ միայն 20-ականների խորհրդային գեղանկարչության մեջ, այլև հին Թիֆլիսում: Թիֆլիսյան բոհեմական միջավայրին պատկանող արվեստագետը բնակազմորեն ընդգրկվում է թիֆլիսահայ ակնավոր նկարիչների աստղաբույլում՝ չկրկնելով նրանցից և ոչ մեկին: Հին Թիֆլիսի բազմաթիվ կենցաղագիրների մեջ Հ. Կարալյանը բոլորից «անաղմուկն» է:

2. Հ. Կարալյանի ողջ կյանքն անցել է հիմնականում եվրոպական քաղաքային մշակույթի խառնարանում, սակայն հոգով ու էությանբ նա մնացել է հավատարիմ իր մանկության տարիների արևելակովկասյան հնավանդ կենսակերպի նախաստեղծ պոեզիային: Այդ պոեզիան կարմիր թելի պես անցնում է նրա բոլոր գործերով, միահյուսվում դարասկզբի թիֆլիսյան կոլորիտին, կինոտոների, փողոցային մանրավաճառների, պարզ ու հասարակ մարդկանց դժվարին առօրյային, նկարչի կարոտածին խոհ ու ապրումին: Նրա կտավներում խոսում է իմաստունը: Նա խոր բանականություն ու տեսածրի լայնություն ունեցող նկարիչ է, ով միաժամանակ ունակ է նաև վերաիմաստավորման ու ընդհանրացման: Այդ ամենը լավագույնս արտահայտվում է ոչ միայն նրա գեղանկարչական աշխատանքներում, այլև կյանքի ու արվեստի մասին նկարչի գրառումներում, էպիգրամաներում, խոհափիլիսոփայական մտքերում:

3. Հ. Կարալյանը ժամանակակից հայ գեղանկարչություն բերեց իր ուրույն, խորաթափանց վերհուշերի թեման, իր ինքնատիպ աշխարհը, իր արվեստի պարզությունը, անկեղծությունը և բանաստեղծական ամբողջականությունը: Նկարիչը պահպանում է ամեն լավն ու դրականը՝ ստեղծելով հուշերի լուսավոր աշխարհ:

4. Հ. Կարալյանի կտավները դարասկզբի թիֆլիսյան կյանքի յուրատեսակ հանրագիտարան են՝ արտաքինից անպաճույժ, անհավակնոտ, միևնույն ժամանակ առիմքնող և դիտողին ակամա մտերմիկ զրույցի տրամադրող: Նրա նկարներից, կարծես դուրս է քաշված օդը, այնտեղ ասես չկա ոչ մի ձայն (օր.՝ «Փայտածուխ վաճառողը», 1959, «Սուջուխ են կախում», 1964, «Ժամրային տեսարան Թբիլիսիի կենցաղից», 1972): Նա իր արվեստով առաջադրում է տարբեր

հոգեբանական խնդիրներ. պատկերում է մարդուն իրեն շրջապատող աշխարհում, կապում նրան հայրենի հողի հետ՝ երեկ, այսօր, վաղը («Ջրբաշխները (ջուր բաժանողները)», 1958, «Գյուղական շուկա», 1966), ներկայացնում ամենօրյա կենսակերպով, կեցության խնդրի առաջ («Հիվանդ երեխան», 1917, «Չվի վաճառք», 1928, «Այցելություն մորը», 1953, «Կժեթի վաճառք», 1952), իր առօրյա դարձած գործողության պահին («Հաց են թխում» 1952, 1973, «Լվացքից հետո», 1955, Չուլխելի (սուջուխ) են կախում 1964, «Լոգանք», 1965), զվարճության, ուրախության պահին պարի, կերուխումի մթնոլորտում («Շալախո» 1958, «Կինտոների պարը», 1913, 1935, «Եկ խմենք», 1920, «Պար փողոցում», 1972), դժբախտության, ծանր սգի, ողբերգության մեջ («Տխուր տրամադրություն (հիշողություններ)», 1954, «Մոր վիշտը» 1975, «Հիվանդ կինտոն», 1960), առօրեական թեմաներին հաղորդում հավերժական խորհուրդ («Աղբյուրի մոտ», 1961, «Բաղնիքում», 1967):

5. Հ. Կարայանի հորինվածքներն առանձնանում են կառուցողական հավասարակշռությամբ և գեղակերպությամբ: Նկարիչը կոմպոզիցիան կառուցում է գեղարվեստական ռիթմիկ կրկնություններով, պարզեցնում է նկարը՝ ընդգծելով դիրքերը, շարժումները և բնորոշ ժեստերը («Կինտոների պարը», 1935, «Չուլխելի (սուջուխ) են կախում», 1964, «Լվացարարուհիները», 1971): Հ. Կարայանի կոմպոզիցիաների ընդհանուր ռիթմը ստեղծվում է գույնի, լույսի, առարկաների իմաստային կամ խորհրդանշական կապի միասնությամբ: Դրանց կառուցման առավել կարևոր հիմքը կոմպոզիցիայի ինքնավար օրենքներն են: Այն հանգամանքը, որ դիտողի մոտ երբեք կտավի գերբեռնվածության կամ դատարկ տարածության տպավորություն չի առաջանում, պայմանավորված է ոչ միայն բոլոր բաղադրիչների փոխադարձ պլաստիկական կապով, այլև մանրամասնորեն մշակված գծային մասշտաբայնությամբ՝ ուղղահայաց և հորիզոնական գծերի, ինչպես նաև երկրաչափական տարբեր պատկերների փոխհարաբերակցության սկզբունքներով («Շալախո» 1958, «Աղբյուրի մոտ», 1956, «Քարտաշը», 1970, Հանդիպում սարերում, 1980, «Ղարաբաղ (Ետդարձ լեռներին)», անթվակիր):

6. Հ. Կարայանի նկարներն ունեն մեծ կամերային երանգ, բայց դրանց առավել կարևոր առանձնահատկությունը ստատիկությունն (անշարժությունն) է: Վերջինս հայ գեղանկարչության մեջ Հովսեփ Կարայանն է առաջին անգամ նպատակաուղղված կերպով կիրառել վերիուշի գաղափարը փոխանցելու համար: Հենց պատկերների և առարկաների ստատիկությունն է թույլ տալիս դրանք դիտել ժամանակի ստվարաշերտի միջով:

7. Հ. Կարայանը ունի գույնի հիանալի գագաղություն, որ կիրառում է և՛ լուկալ հնչել դեկորատիվությամբ, և՛ մուրթ երանգների հարուստ գեղանկարչությամբ: Նրա երանգապնակը բաղկացած է շատ ներդաշնակ և աչքի ընկնող գույներից: Նկարչի ներկապնակում գերակշռում են օքրայագույնը (կամ դեղնադարչնագույնը) իր հարուստ աստիճանավորումներով, բաց կանաչը, մոխրագույնից (կամ գորշագույնից) մինչև ամենասևը և երբեմն էլ ցայտուն սպիտակը, իսկ լուսապատկերային (սպեկտրային) մաքուր գույներն ընդհանրապես բացակայում են: Այստեղից էլ՝ Կարայանի կտավներին բնորոշ զուսպ կոլորտը, որը նույնպես ենթարկված է հուշերի գաղափարին:

8. Հ. Կարայանը իրավամբ ժողովրդական նկարիչ է. նրան գրավել է իր ժողովրդի կյանքի պատմականորեն դասավորված կացությունը: Նրա արվեստն

իր մեջ է ներքաշել ժողովրդի իմաստությունը և դարավոր փորձը: Հովսեփ Կարապանի ստեղծագործությունների արժանիքը նաև նրանում է, որ անձնական վերապրումներով համեմված նրա ամեն մի ստեղծագործություն առանձին վերցրած գեղարվեստական արժեք լինելով՝ արդեն ամբողջության մեջ դառնում է մեր ժողովրդի պատմության յուրօրինակ նկարագիր՝ մեկ անգամ ևս հաստատելով, որ ամեն մի նկարիչ նշանակալի է նրանով, որ ազգային արվեստ է բերում իր անհատական ու մինչ այդ անծանոթ ընկալումը:

9. Թիֆլիսահայ նկարիչ Յ. Կարապանի գեղանկարչական աշխատանքները լրացնում են շղթայի այն օղակը, առանց որի դժվար է պատկերացնել հայկական արվեստը: Յուրացնելով ռուսական և արևմտաեվրոպական արվեստների հիմքերը, ինչպես նաև հայ ու վրաց ժողովուրդների մշակույթը՝ գեղանկարչության մեջ նա ստեղծեց իր անկրկնելի ոճը: Արվեստագետը ամբողջ կյանքում չդավաճանեց իր գեղագիտական սկզբունքներին, միշտ հետամուտ եղավ իր արվեստի ճշմարտությանը՝ միաժամանակ մնալով դասականի կողմնակիցն ու ջատագովը: Այսպիսով, Յ. Կարապանը հայ գեղանկարչություն բերեց մի նոր ժանր՝ «հիշողությունների ժանրը», որն արդեն ունի իր հետևորդները ի դեմս Յ. Անանիայանի, Վ. Էլիբեկյանի:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Մինասյան Մ.* Հովսեփ Կարապանի ստեղծագործությունների առանձնահատկությունները // «Էջմիածին» պաշտոնական ամսագիր / Գլխ. խմբագիր Վարդան Դևրիկյան, Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 2007, էջ 128-130:
2. *Մինասյան Մ.* Կենցաղային ժանրը Հովսեփ Կարապանի նկարներում // Լրաբեր հասարակական գիտությունների / Գլխ. խմբագիր Ալբերտ Ա. Խառատյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1-2 (627-628), 2010, էջ 419-423:
3. *Մինասյան Մ.* Կինոյի կերպարը Հովսեփ Կարապանի արվեստում // Լրաբեր հասարակական գիտությունների / Գլխ. խմբագիր Ալբերտ Ա. Խառատյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 3 (629), 2010, էջ 315-320:
4. *Մինասյան Մ.* Հովսեփ Կարապանի թեմատիկ-կոմպոզիցիոն նկարները // Կանթեղ 1: Գիտ. հոդվածների ժող. / Գիրք 1 (46): Գլխ. խմբ. Լ. Արզումանյան, Երևան: Ասողիկ, 2011, էջ 232-239:
5. *Մինասյան Մ.* Հիշողությունների բարոյափիլիսոփայական հիմնախնդիրը Հովսեփ Կարապանի արվեստում // Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ: ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. - Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջ 277-280:
6. *Մինասյան Մ.* Արվեստագետներ Հովսեփ Կարապանի և Սերգեյ Փարաջանովի մտերմության հիմքերը // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջ 497-504:

МИНАСЯН МАРИНЕ ПЕТИКОВНА

ЖИВОПИСЬ ОВСЕПА КАРАЛЯНА

Резюме

Данная диссертация посвящена живописи заслуженного художника Армянской ССР (1967), члена Союза художников СССР (1942), представителя армяно-советского изобразительного искусства, выдающегося армяно-тифлисского мастера **Овсеп (Иосифа) Артемьевича Каралаяна (Каралова)** (1897-1981). Актуальность темы обусловлена необходимостью дополнения истории армянского изобразительного искусства 20-го века, в частности, армяно-тифлисского искусства.

Творческая деятельность О. Каралаяна многообразна: художник жил и творил в Тбилиси, Баку, Москве, а с 1953-его года в Ереване. Он занимался живописью, графикой, книжным оформлением, сценографией, фреской, оформлением плакатов, скульптурой (любительской), гравюрой, и даже сделал эскизы для фильма. На протяжении многих лет он занимался педагогической деятельностью: преподавал в Тифлисе (Художественной студии при Айартуне), в Москве (Институт повышения квалификации архитекторов) и в Баку (Азербайджанское государственное художественное училище). Тем не менее, его основной вклад в историю армянского изобразительного искусства 20-го века, в основном связан с живописными работами. В последние тридцать лет живя в Ереване, художник продолжает последовательно и большим мастерством воплощать в жизнь свои детские воспоминания, создавая прекрасные картины-новеллы, отражающие народную жизнь и традиции.

Очевидно также, что среди выдающихся деятелей армянской культуры уникальное место и особую роль имеет живописец О. А. Каралаян, чья жизнь и деятельность является ярким примером служения культурному прогрессу и искусству армянского народа. Верно, что некоторые его современники коллеги-искусствоведы очень высоко оценили вклад О. Каралаяна в историю армянского искусства 20-го века и художественной жизни Армении, однако жизнь и деятельность мастера, его многожанровое богатое творческое наследие, так и не стали предметом научных исследований.

Цель диссертации заключается в том, чтобы посредством комплексного изучения жизни и живописи О. А. Каралаяна выявить и представить научному сообществу, должным образом не оцененного мастера и его художественные произведения, а также по возможности дополнить исторический контекст армяно-тифлиской живописи.

Диссертационная работа является первым исследованием монографического характера, где сделана попытка наиболее комплексно и разносторонне выявить биографию и художественную деятельность О. Каралаяна, в частности, на основе анализа особенностей его живописных работ.

В рамках осуществленного исследования:

- Нами было собрано и систематизировано большое количество знаменитых и неизвестных, более чем 150 произведений О. Каралаяна, по возможности, уточняя их названия и даты.

• Изучена и всесторонним обзором представлена полная биография О. Караяна, детали и хронология его жизни и художественной деятельности, а также рассмотрена разносторонняя деятельность мастера.

• Научно внедрены как личные, так и другие архивные документы художника, факты из средств массовой информации, а также многие новые материалы, сведения и воспоминания современников и родственников, которые представляют и дополняют историю искусства О. Караяна.

• Выявлены многие забытые, неизвестные или малоизвестные художественные произведения творческого наследия художника, которые были в стороне от поле зрения специалистов.

Основанием для исследования служило, в первую очередь, художественное наследие О. Караяна, в том числе многие его неопубликованные ранее произведения. Кроме того, была широко использована профессиональная и справочная литература, посвященная О. Караяну в прессе, многочисленные монографии, опубликованные на разных языках альбомы, каталоги, статьи о выставках и работах художника, свидетельства и воспоминания дочери художника. При изучении были использованы также данные веб-сайтов, архивных документов, в частности, Национального архива Армении, архивного отдела Национальной галереи Армении и личного архива художника.

Методологической основой исследования являлись, имеющее место в современной и советской искусствоведческой литературе, специальные научные исследования и обоснованные положения о различных стилях живописи. В основе работы лежит научный принцип историчности: учитывался конкретный период и присущие к тому или к другому этапу идеологические, культурные события и тенденции, а также соблюдена хронологическая последовательность.

Жизнь и карьера О. Караяна наиболее подробно освещались в обширном биографическом очерке, а живопись представлена по периодам: ранний, средний и поздний периоды. По необходимости, были проведены параллели между О. Караяном и художниками его поколения. При осуществлении работы применялись методы теоретического анализа и уже давно используемые в искусствоведении эмпирико-описательные, сравнительно-оценочные методы, а для искусствоведческого анализа конкретных работ применялись стилистические, морфологические, структурные, а также, иконологические методы.

Основные положения и результаты работы могут дополнить страницы армяно-тифлиского изобразительного искусства 20-го века, особенно истории живописи, а также использоваться в дальнейших научно-исследовательских работах, относящихся к творчеству О. Караяна. Кроме того материалы диссертации могут быть использованы на курсах истории армяно-тифлиского искусства 20-го века.

Представленная диссертационная работа изложена на 131 компьютерных страницах, состоит из введения, двух глав, выводов, списка использованной литературы (187 источников), а также приложения, которое включает в себя хронологию произведений О. Караяна, список репродукций и альбом с картинами.

MARINE PETIK MINASYAN

HOVSEP KARALYAN'S PAINTING

Summary

This thesis is dedicated to the art of Tbilisi great master **Hovsep Artem Karalyan** (1897-1981), a representative of Soviet-Armenian fine arts, member of the USSR Union of Artists (1942), Honored Artist of the ASSR (1967). The relevance of the topic is conditioned by the need to fill the missing pages of the 20th century Armenian fine arts, particularly art history of Tbilisi Armenians.

H. Karalyan's creative activities are more than of varied genres: the artist lived and worked in Tbilisi, Baku, Moscow and since 1953 in Yerevan. He was engaged in pictorial art, graphic arts, book design, stage painting, fresco, poster design, statuary (amateur), wood carving (engraving), even made sketches for a film. For many years he was also engaged in educational activities, taught in Tiflis (Hayartun Art Studio), Moscow (Architect Training Institute) and Baku (Azerbaijan State Art College). However, his main contribution to the 20th century Armenian fine arts history is mostly related to paintings. Living in Yerevan for the last thirty years, the artist continues, with consistence and great skill, to bring his childhood memories to life, creating beautiful image-novels that reflect people's lives and traditions.

It is evident that, among the prominent figures of Armenian culture, H. A. Karalyan also has an outstanding place and role, whose life and work is a unique example of serving to the art, cultural progress of the Armenian nation.

Although It's true that some of his contemporary associate artists gave very high estimation to H. Karalyan's earnings in the 20th century Armenian art and artistic life history, still the master's life, activities, creative multi-genre rich heritage and immense service rendered to the Armenian fine arts never became a subject of academic research.

The aim of the dissertation is to discover, through the combined study of H. A. Karalyan's life, and present the master (who until now received little attention and was not properly appreciated) and his art works to the academic community, as well as complete the historical panorama of Tbilisi Armenian art as much as possible.

The dissertation is an inaugural study of monographic nature, where an attempt is made for the first time to bring out Hovsep Karalyan's biography and artistic activities in a more complete and comprehensive manner, particularly through analysis of the characteristics of his paintings. Within the implemented research:

- More than 150 known and unknown works of H. Karalyan were collected and systematized, clarifying their titles and dates to a feasible extent.
- H. Karalyan's full biography, details and complete chronology of his life and artistic work were studied and presented in a comprehensive overview; the master's multi-genre activities were addressed.
- The painter's personal and other archival documents, as well as facts and information taken from the old media, numerous newly discovered materials, testimonies and memories of contemporaries and relatives, which represent and complete H. Karalyan's art history, were introduced into academic circulation.

- Many painting works of the artist's creative heritage that were forgotten, missed from the attention of specialists, unknown or little-known have been brought to appearance.

The study was firstly based on H. Karalyan's artistic heritage including the painter's numerous non-typical works preserved in several private collections (available to us through difficult collection of many years) willingly handed to us by his daughter I. Karalyan. Besides, professional and informative literature devoted to H. Karalyan was broadly used, including native and foreign media (newspapers, journals, magazines), numerous monographs related to general and specific problems of Soviet Armenian and Tbilisi Armenian painting, several articles, albums, catalogues about the master's works and exhibitions published in many languages, testimonies and memoirs of Karalyan's daughter. We used websites, as well as materials of the archived documents, particularly from the National Archives of the Republic of Armenia, the Manuscripts and Documentation Fund Department of the National Gallery of Armenia, the painter's personal archives.

Methodologically, the study was based on specific academic research and justified provisions about different painting styles, included in the Soviet and contemporary art literature.

The paper is based on the academic principle of history. Specific data, ideological, cultural occurrences and trends typical of a certain phase have been taken into account. Chronological order is maintained as well.

H. Karalyan's life and activities were covered more thoroughly in a broad biographical overview, and art was presented according to phases: early phase, middle phase and late phase. If necessary, some parallels were drawn between H. Karalyan and the painters of his generation. While doing the research, such analytical methods (applied in the Arts since the early periods) were used as empirical-descriptive, critical-comparative, artistic and theoretical, and during analysis of some specific works, stylistic, formal, structural as well as iconological methods were applied.

Provisions and results of the thesis can add not only to the 20th century Tbilisi Armenian historical pages of fine arts but also to those of painting, as well as be applied in the future academic research works related to H. Karalyan's art within Armenian painting studies. Besides, the materials of the dissertation may be applied in the training courses on the 20th century Tbilisi Armenian painting history.

The presented paper is written on 131 computer pages and is comprised of an introduction, two chapters, a conclusion, used references and an appendix, where H. Karalyan's work chronicles, list of his republished art works and a picture book are included. The used references include 187 sources.